ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2008Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ

(ՀՀ ԸՕ 63^{2}-րդ հոդված, 13-րդ կետ)

Հանրապետության Նախագահի 2008 թվականի փետրվարի 19-ի ընտրությունների (այսուհետ՝ ընտրություններ) նախապատրաստման և կազմակերպման աշխատանքները Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովն (այսուհետ՝ հանձնաժողով) իրականացրել է ողջ ծավալով՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով (այսուհետ՝ օրենսգիրք) սահմանված կարգով և ժամկետներում:

Հանձնաժողովի 2007թ. նոյեմբերի 9-ի թիվ 159-Ա որոշմամբ հաստատվել է ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցը, որի բոլոր կետերի կատարումը՝ դրանում սահմանված ժամկետներում ապահովվել է:

Հանձնաժողովն իր լիազորությունների սահմաններում ընդունել է ընտրական գործընթացների կանոնակարգման համար անհրաժեշտ իրավական ակտերը, որոնք «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հրապարակվել են և մտել ուժի մեջ:

Օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում կազմավորվել է 1923 ընտրական տեղամաս, ձևավորվել են բոլոր տեղամասային ընտրական հանձնաժողովները:

Օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում ընտրողների ցուցակները, այդ թվում լրացուցիչ ցուցակները՝ ցուցակներում անճշտությունների վերաբերյալ դիմումներ տալու ժամկետների, տեղի, դրանց քննարկման կարգի և պայմանների մասին կից տեղեկանքներով փակցվել են տեղամասային կենտրոններում, հատկացվել ընտրական հանձնաժողովներին, տեղադրվել հանձնաժողովի ինտերնետային կայքում՝ նաև ըստ տեղամասերի:

Քվեարկության օրն ընտրելու իրավունքը վերականգնելու համար դատարան է դիմել 98 քաղաքացի, բավարարվել է 49-ը դիմում, լիազոր մարմնի համապատասխան տեղեկանքներով ընտրողների լրացուցիչ ցուցակներում ընդգրկվել է մոտ 250 ընտրող: Ընդհանուր առմամբ քվեարկության օրն ընտրելու իրավունքը վերականգնել է քվեարկության մասնակիցների ընդամենը 0.02 տոկոսը:

Այս ընտրությունների ժամանակ առաջին անգամ կիրառվեց ըստ գտնվելու վայրի քվեարկելու իրավունքի ինստիտուտը, որը մոտ 15.000 ընտրողի հնարավորություն տվեց քվեարկության օրը մասնակցելու ընտրություններին իրենց գտնվելու վայրի ընտրական տեղամասում: Օրենսգրքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն համապետական ընտրությունների դեպքում այլ համայնքի հաշվառում ունեցող քաղաքացիները քվեարկության օրվանից մինչև 7 օր առաջ լիազոր մարմնի կամ նրա համապատասխան ստորաբաժանման

ղեկավարին կարող են ներկայացնել դիմում՝ ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից ժամանակավորապես դուրս գալու և քվեարկության օրն ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների լրացուցիչ ցուցակում ընդգրկելու վերաբերյալ:

Գործող օրենսդրությունը հնարավորություն է տալիս ըստ գտնվելու վայրի քվեարկելու կարգը կիրառել նաև Երևան քաղաքի համայնքների դեպքում, ինչն արհեստական դժվարություններ է ստեղծում՝ նաև ընտրողների ցուցակների կազմման գործում: Երևանի մասին օրենքի ընդունումից և Երևանի քաղաքապետի ընտրություններից հետո արդեն Երևան քաղաք-համայնքի համար օրենսգրքի այս նորմը չի գործի:

Ընտրողները սահմանված կարգով և ժամկետներում ծանուցվել են քվեարկության օրվա, տեղի և ժամանակի մասին:

Հանրապետության Նախագահի թեկնածուներն ընդհանուր առմամբ ունեցել են օրենսգրքով սահմանված հնարավորություններ՝ իրենց գաղափարներն ու ծրագրերը ընտրողներին հասցնելու համար:

Հեռուստառադիոընկերություններն օրենսգրքով սահմանված ժամկետներում հրապարակել են նախընտրական քարոզչության շրջանակներում թեկնածուներին տրամադրվելիք եթերաժամի յուրաքանչյուր րոպեի գինը՝ թեկնածուների համար ապահովելով հավասար պայմաններ:

Հանրային հեռուստատեսությունն ու հանրային ռադիոն թեկնածուներին վճարովի և անվճար եթերաժամ տրամադրել են հանձնաժողովի կողմից վիճակահանության արդյունքով սահմանված ժամանակացույցերին համապատասխան:

Քվեարկության օրն ընտրությունները դիտարկել են մոտ 32.000 վստահված անձ, 14.000 տեղական դիտորդ՝ 39 կազմակերպությունից, 600-ից ավելի միջազգային դիտորդ՝ 6 կազմակերպությունից:

Հանձնաժողովի անդամները ծանոթացել են ստացված բոլոր դիմումներին և դրանց պատասխաններին, դիմումների պատասխանները տեղադրվել են հանձնաժողովի ինտերնետային կայքում:

Քվեարկության նախորդ օրը և քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովներն իրականացրել են իրենց պարտականությունները՝ օրենսգրքով և ՀՀ ԿԸՀ որոշումներով սահմանված կարգով և ժամկետներում:

Արձանագրվել է ընտրողների մեծ ակտիվություն՝ մասնակցությունը կազմել է 70,47 տոկոս:

Քվեարկության օրը՝ ժամը 9.00-ից սկսած, առնվազն 3-ժամյա պարբերականությամբ հանձնաժողովը հրապարակել է ընտրության մասնակիցների թիվը, ժամը 23.00-ից սկսած՝ արդեն քվեարկության նախնական արդյունքները՝ ըստ ստացման հերթականության:

Ապահովվել է աննախադեպ հրապարակայնություն՝ ցանկացած տեղեկատվություն հանձնաժողովի ինտերնետային կայքում իրական ժամանակում հասու է եղել զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների, վստահված անձանց, դիտորդների, նաև ցանկացած քաղաքացու համար:

Ընտրության նախնական արդյունքները, ըստ ընտրական տեղամասերի, հանձնաժողովն աղյուսակավորել, ամփոփել և արձանագրությամբ վավերացրել է փետրվարի 20-ին, ժամը 11[52] –ին կամ օրենսգրքով նախատեսված ժամկետից 8 ժամ շուտ:

1923 տեղամասային ընտրական հանձնաժողովների արձանագրություններից 1506-ը կամ որ նույնն է՝ 78.3 տոկոսը, ստորագրել են տեղամասային ընտրական հանձնաժողովների բոլոր ութ անդամները, 96 տոկոսը՝ 7 անդամներ, և ընդամենը 8 արձանագրություն է, որ ստորագրել են հանձնաժողովների 5 անդամներ, ինչն ապացուցում է, որ տեղամասային ընտրական հանձնաժողովների ընդդիմադիր կուսակցությունները ներկայացնող անդամները նույնպես, որպես կանոն, ստորագրել են այդ արձանագրությունները:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներում իրականացվել է 135 տեղամասերում քվեարկության արդյունքների վերահաշվարկ: Ժամանակի սղության պատճառով չեն վերահաշվարկվել տարբեր ընտրատարածքների 22 տեղամասերի քվեարկության արդյունքներ:

Հանձնաժողովը, ս/թ փետրվարի 24-ի իր նիստում, հիմք ընդունելով ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունները, կազմել է Հանրապետության Նախագահի 2008թ. փետրվարի 19-ի ընտրությունների արդյունքների վերաբերյալ արձանագրություն և վավերացրել այն:

Նույն նիստում հանձնաժողովը քննարկել է 2008թ. փետրվարի 19-ից 24-ը ստացված դիմումները և որոշմամբ արձանագրել, որ դիմումներում նշված տեղեկությունները չեն պարունակում օրենսգրքի այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրության արդյունքների վրա:

Այս պայմաններում, հաշվի առնելով, որ ընտրական հանձնաժողովներում և Հայաստանի Հանրապետության վարչական դատարանում չկան չքննված դիմումներ, հիմք ընդունելով հանձնաժողովի 2008 թվականի փետրվարի 24-ի՝ Հանրապետության Նախագահի ընտրությունների արդյունքների վերաբերյալ արձանագրությունը և ղեկավարվելով Հայաստանի օրենսգրքի 83-րդ և 84-րդ հոդվածների 1-ին կետերով, հանձնաժողովը որոշում է ընդունել **Հանրապետության Նախագահ ընտրվելու մասին:**

Վատ ավանդույթ է դարձել քաղաքական խնդիրներն իրավական հարթություն տեղափոխելն ու իրավական գործընթացները քաղաքականացնելը:

Ընտրական բարի ավանդույթների պակասի, ինչպես նաև ընտրական գործընթացներում սեփական սխալներն ընդունելու ու գնահատելու համարձակություն չունենալու պատճառով ընտրությունների արդյունքները հերթական անգամ վիճարկվեցին ՀՀ սահմանադրական դատարանում:

Ընտրություններն անվավեր ճանաչելու ընթացակարգերի նկատմամբ մակերեսային վերաբերմունքը և սահմանադրական դատարան դիմելն ընտրական գործընթացի հերթական փուլ դիտելն իրավական, քաղաքական մշակույթի հերթական բացն է:

Ժողովրդավարական ընտրությունները ենթադրում են նաև պարտությունն արժանապատվորեն ընդունելու կարողություն:

Հանձնաժողովը բնավ էլ չի ժխտում որոշ խախտումների առկայությունը: Հարաբերություններ, որոնց մասնակցում է 1,5 միլիոնից ավելի սուբյեկտ, գործնականում չեն կարող զերծ մնալ խախտումներից, սակայն, բավարար չէ խախտումների պարզ թվարկումը, այլ պահանջվում է ապացուցել, որ հատկապես այդ խախտումների արդյունքում հնարավոր չէ պարզել ընտրողների իրական կամաարտահայտությունը:

Հանձնաժողովը, իրականացնելով օրենքով իրեն վերապահված լիազորությունները, առաջին հերթին առաջնորդվել է ընտրախախտումների կանխարգելման, դրանց ի հայտ գալու դեպքում օպերատիվ վերացման սկզբունքով: Դրանով է պայմանավորված փաստարկված ընտրախախտումների ցածր թիվը:

Օրենսգրքի խախտումները կարող են հայտնաբերվել հետևյալ եղանակներով.

- հանձնաժողովի անդամների սեփական նախաձեռնությամբ,
- ստորադաս ընտրական հանձնաժողովների կողմից ներկայացված համապատասխան տեղեկատվության միջոցով,
- քաղաքացիների, թեկնածուների և նրանց վստահված անձանց, դիտորդների դիմում-բողոքների քննության միջոցով,
- մամուլի համապատասխան հրապարակումների ուսումնասիրման միջոցով:

Այսպես, 2008թ. փետրվարի 19-ին ահազանգ է ստացվել այն մասին, որ Երևան քաղաքի թիվ 2 շուկայի մոտ անձնագիրը փոխարինող 9-րդ ձևեր են բաժանում և քաղաքացիներին ավտոմեքենաներով տեղափոխում ընտրատարածքներ: Հանձնաժողովի նախագահն այդ մասին անհապաղ տեղեկացրել է Կենտրոն համայնքի ոստիկանության բաժին:

Թիվ 5 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալի կողմից հաղորդում է ներկայացվել Մաշտոցի քննչական բաժին, այն մասին, որ ընտրությունների արդյունքների վերահաշվարկի գործողության ժամանակ, մինչև աշխատանքները սկսելը, ԿԸՀ անդամ Զ.Թադևոսյանը պատռել է 5/21 տեղամասի ընտրական փաստաթղթերի պարկը, հանել է քվեաթերթիկները, որի արդյունքում հնարավոր չի եղել իրականացնել վերահաշվարկի աշխատանքները:

Ընտրական հանձնաժողովների անդամների՝ կոնկրետ իրավիճակների վերաբերյալ պարզաբանումներ պահանջող դեպքերի վերաբերյալ տրվել են անհրաժեշտ պարզաբանումներ, օրենսգրքի 40.1-րդ հոդվածի համաձայն անհապաղ ձեռնարկվել օպերատիվ միջոցներ:

Թեկնածուների գրանցումից հետո մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը ստացվել է 111 դիմում:

Դիմումներից 68-ը վերաբերել են նախընտրական քարոզչության՝ դիմումատուների կարծիքով սահմանված կարգի խախտումներին, հիմնականում՝ մինչև նախընտրական քարոզչության համար օրենսգրքով սահմանված ժամկետի սկսվելը քարոզչություն իրականացնելուն:

Օրենսգրքի 18 հոդվածի 5-րդ կետի համաձայննախընտրական քարոզչությունը սկսվում է թեկնածուների և կուսակցությունների գրանցման համար նախատեսված վերջին օրվան հաջորդող օրը և վերջանում քվեարկությունից մեկ օր առաջ:

Քաղաքացիների, կուսակցությունների կողմից մինչև նախընտրական քարոզչության փուլի սկսվելն իրականացվող տեղեկատվություն տարածելու գործունեությունը, նույնիսկ եթե այն ունի նախընտրական քարոզչության նշաններ, չի կարող համարվել նախընտրական քարոզչություն: Այն կարելի է անվանել քաղաքական քարոզչություն, քաղաքական գովազդ, սակայն ոչ մի դեպքում՝ նախընտրական քարոզչություն:

Հանձնաժողովը թվով 57 դիմումների վերաբերյալ օրենսգրքով սահմանված կարգով ընդունել է որոշումներ, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան տվել 8 պաշտոնական պարզաբանում:

Մամուլի հրապարակումների ուսումնասիրման արդյունքում հանձնաժողովի կողմից ՀՀ դատախազություն են ներկայացվել հաղորդումներ՝ «Առավոտ» օրաթերթի՝ 01.02.08թ. «Ոստիկանապետը անձնական թշնամի ունի» խորագրով տպագրված հոդվածում, ինչպես նաև 2008թ. փետրվարի 20-ի «Առավոտ», «Հայկական ժամանակ», «Հայք», «Ժամանակ Երևան», «Չորրորդ իշխանություն» օրաթերթերում տեղ գտած հրապարակումների վերաբերյալ:

Նյութերի նախապատրաստման ընթացքում հիմնավորող ապացույցներ ձեռք չեն բերվել, և հանցագործության դեպքի բացակայության պատճառաբանությամբ մերժվել է քրեական գործերի հարուցումը:

Հանձնաժողովի կողմից ՀՀ դատախազություն է ներկայացվել ևս 12 հաղորդում՝

- թիվ 9/31 տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից քվեարկության արդյունքներն աղավաղելու և կեղծելու վերաբերյալ.

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի փետրվարի 29-ի դատավճռով թիվ 9/31 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 150-րդ հոդվածով և ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 2 տարի ժամկետով:

-վստահված անձ Ռ.Թորոսյանի դիմումը՝ քվեարկության նախապատրաստման ու անցկացման՝ դիմումատուի կարծիքով խախտումների վերաբերյալ.

Քննարկման արդյունքներով հեղինակին հայտնվել է, որ հաղորդման մեջ արծարծված փաստարկները կրում են ընդհանրական բնույթ, և այն կոնկրետ հանցագործության մասին տեղեկատվություն չի պարունակում:

- թիվ 9/18 տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրության քաղվածքի պատճենում առկա տվյալների և հանձնաժողովում ստացված արձանագրության տվյալների միջև առկա անհամապատասխանությունների վերաբերյալ.

Հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 150-րդ հոդվածի հատկանիշներով, կատարվում է նախաքննություն:

- թիվ 17/5 տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրության քաղվածքի պատճենում առկա տվյալների և հանձնաժողովում ստացված արձանագրության տվյալների միջև առկա անհամապատասխանությունների վերաբերյալ.

Հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 150-րդ հոդվածի հատկանիշներով, կատարվում է նախաքննություն:

- 20/04 տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրության քաղվածքի պատճենում առկա տվյալների և հանձնաժողովում ստացված արձանագրության տվյալների միջև առկա անհամապատասխանությունների վերաբերյալ.

Հարուցվել է քրեական գործ՝ՀՀ քրեական օրենսգրքի 150-րդ հոդվածի հատկանիշներով, կատարվում է նախաքննություն:

- 22/21 տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրության քաղվածքի պատճենում առկա տվյալների և հանձնաժողովում ստացված արձանագրության տվյալների միջև առկա անհամապատասխանությունների վերաբերյալ.

Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի ապրիլի 11-ի դատավճռով թիվ 22/21 տեղամասային հանձնաժողովի նախագահը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 150-րդ հոդվածով և նրա նկատմամբ նշանակվել է պատիժ՝ ազատազրկում՝ 3 տարի 6 ամիս ժամկետով: Դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կարգով նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառել՝ սահմանելով փորձաշրջան՝ 1 տարի ժամկետով: Նույն գործով դատարանը մեղավոր է ճանաչել նաև քաղ. Ս. Ամիրխանյանին և Ս.Կարապետյանին ՀՀ քրեական օրենսգրքի 38-150-րդ հոդվածով նախատեսված հանցանք կատարելու մեջ (դրդչություն) և երկուսին էլ դատապարտել ազատազրկման՝ 3 տարի ժամկետով:

- թիվ 22/22 տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրության քաղվածքի պատճենում առկա տվյալների և հանձնաժողովում ստացված արձանագրության տվյալների միջև առկա անհամապատասխանությունների վերաբերյալ.

Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի մարտի 27-ի դատավճռով ընտրության ընթացքում քվեարկության արդյունքների վերաբերյալ կազմած, իր ստորագրությամբ ու տեղամասի կնիքով հաստատած քաղվածքն ակնհայտ սխալ տվյալներով հաստատելու համար թիվ 22/22 տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 150-րդ հոդվածով նախատեսված հանցագործության կատարման մեջ և դատապարտվել 3 տարվա ազատազրկման: Դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կարգով նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառել՝ սահմանելով փորձաշրջան՝ 1 տարի ժամկետով:

- թիվ 22/30 տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրության քաղվածքի պատճենում առկա տվյալների և հանձնաժողովում ստացված արձանագրության տվյալների միջև առկա անհամապատասխանությունների վերաբերյալ.

Հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 150-րդ հոդվածի հատկանիշներով, կատարվում է նախաքննություն:

- թիվ 24/18 տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրության քաղվածքի պատճենում առկա տվյալների և հանձնաժողովում ստացված արձանագրության տվյալների միջև առկա անհամապատասխանությունների վերաբերյալ.

Հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 150-րդ հոդվածի հատկանիշներով, կատարվում է նախաքննություն:

- թիվ 24/19 տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրության քաղվածքի պատճենում առկա տվյալների և հանձնաժողովում ստացված արձանագրության տվյալների միջև առկա անհամապատասխանությունների վերաբերյալ.

Հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 150-րդ հոդվածի հատկանիշներով, կատարվում է նախաքննություն:

- թիվ 38/62 տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրության քաղվածքի պատճենում առկա տվյալների և հանձնաժողովում ստացված արձանագրության տվյալների միջև առկա անհամապատասխանությունների վերաբերյալ.

Հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 150-րդ հոդվածի հատկանիշներով, կատարվում է նախաքննություն:

- թիվ 13 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի արձանագրության տվյալների և թիվ 13/10 տեղամասային ընտրական հանձնաժողովի արձանագրության տվյալների միջև առկա անհամապատասխանության վերաբերյալ.

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի դատավճռով թիվ 13 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 150-րդ հոդվածով նախատեսված հանցագործության կատարման մեջ և դատապարտվել ազատազրկման՝ 2 տարի ժամկետով:

Ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելիս ամենամեծ խնդիրն այն խախտումների /և դրանց քանակի/ որոշարկումն է, որի պարագայում կարելի է պնդել, որ վերջինները կարող էին ազդել ընտրությունների արդյունքների վրա:

Ազդեցության օբյեկտիվ ապացույցների բացակայությունը նշանակում է, որ ընտրությունները վավեր են:

Այս տրամաբանությունից ելնելով էլ ՀՀ սահմանադրական դատարանը մերժեց երկու դիմումներն էլ՝ ուժի մեջ թողնելով հանձնաժողովի որոշումը՝ Հանրապետության Նախագահ ընտրվելու մասին:

Հանձնաժողովը պատրաստակամ է ընդունել օրենսգրքի հետագա բարելավմանն ուղղված առաջարկություններ: